# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 37-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի ԱՆԴՐԱՆԻԿ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 17-րդ հոդվածներով,համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 2021 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 135-Ա որոշման, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ-8, դեմ-0, ձեռնպահ-0, ավագանին ***որոշում է***.

Հաստատել Տաթև համայնքի ավագանու 2021 թվականի նոյեմբերի 15-ի անդրանիկ արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Համամասնական ընտրակարգով ձևավորված ավագանու կազմից Տաթև համայնքի ղեկավար ընտրելու մասին

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի նորընտիր ավագանու խմբակցությունների ստեղծման մասին

3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու հերթական նիստի օր սահմանելու, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու արտահերթ նիստի օր և նորընտիր համայնքի ղեկավարի երդման օր ու արարողակարգ սահմանելու մասին

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԱՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆՆԱ

ԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՐԻ

ԼԱԼԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆՎԵՐ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՆԵՐՍԵՍՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՓԱՐՍՅԱՆ ԵԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐԹՈՒՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 38-Ա

## ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱԶՄԻՑ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ <<Ընտրական օրենսգիրք>> ՀՀ սահմանադրական օրենքի 142.2 հոդվածով և հիմք ընդունելով համայնքի նորընտիր անդամ Սամվել Հայրապետյանի <<Շանթ Դաշինք>> ազգայնական կուսակցությունից ընտրված ավագանու անդամ Սամվել Լալայանին Տաթև համայնքի ղեկավարի թեկնածու առաջադրելու առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքներով՝ կողմ-8, դեմ-0, ձեռնպահ-0, համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Համամասնական ընտրակարգով ձևավորված ավագանու կազմից՝ <<Շանթ Դաշինք>> ազգայնական կուսակցության ցուցակով ընտրված ավագանու անդամ Սամվել Լալայանին ընտրել Տաթև համայնքի ղեկավար:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից հետո հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԱՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆՆԱ

ԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՐԻ

ԼԱԼԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆՎԵՐ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՆԵՐՍԵՍՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՓԱՐՍՅԱՆ ԵԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 39-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՎԱԳԱՆՈՒ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 66 հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով նիստը վարողի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքներով՝ կողմ-8, դեմ-0, ձեռնպահ-0, Տաթև համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Ստեղծել համամասնական ընտրակարգով ընտրված ավագանու կազմից հետևյալ խմբակցությունները.

1) <<Շանթ դաշինք>> ազգայնական խմբակցություն՝ 6 անդամ

2) <<Ապրելու երկիր>> խմբակցություն՝ 2 անդամ

3) <<Քաղաքացիական պայմանագիր>> խմբակցություն՝ 7 անդամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից հետո հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԱՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆՆԱ

ԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՐԻ

ԼԱԼԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆՎԵՐ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՆԵՐՍԵՍՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՓԱՐՍՅԱՆ ԵԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

15 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 40-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՐԴՄԱՆ ՕՐ ՈՒ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 62, 65, 74 հոդվածներով, հիմք ընդունելով ավագանու անդամների առաջարկությունը՝ որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ-8, դեմ-0, ձեռնպահ-0, Տաթև համայնքի ավագանին ***որոշում է***՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու հերթական նիստի օր սահմանել 2021թվականի դեկտեմբերի 6-ը, ժամը՝ 15:00:

2.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու արտահերթ նիստի օր սահմանել 2021 թվականի նոյեմբերի 18-ը, ժամը՝ 10:00:

3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի նորընտիր ղեկավարի երդման օր սահմանել 2021 թվականի նոյեմբերի 18-ը, ժամը՝ 10:00:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից հետո հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԱՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆՆԱ

ԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՐԻ

ԼԱԼԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆՎԵՐ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՆԵՐՍԵՍՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՓԱՐՍՅԱՆ ԵԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐԹՈՒՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ